ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

(առարկա)

Թեմա՝ **Սովորողների արժեհամակարգի ձևավորումը համագործակցային մեթոդի կիրառմամբ**

Կազմեց՝ **Արմինե Սիմոնյան**

(անուն,ազգանուն)

Լեռնաձորի հիմնական դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ **Լուսինե Սողոմոնյան**

« Կապանի N 2ավագ դպրոց » ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

1.Ներածություն……2
2.Գրական ակնարկ……3
3.Փորձարարական հետազոտություն……6
3.1Փորձարարական դաս 1 ……7
3.2Փորձարարական դաս 2 ……...8
4.Վերլուծություն……10
5.Գրականության ցանկ……11
6.Հավելված……..12
6.1.Դասի պլան -1……...12
6.2 Դասի պլան-2……13

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակությունը արմատական փոփոխությունների մի նոր շրջափուլում է, որը անմիջականորեն ազդում է դպրոցականների արժեքային համակարգի վրա: Նրանց ուսերին է ծառանում ժամանակի պահանջներին

համապատասխան կարողությունների զարգացման խնդիրը:

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն ու խմբավորում ստեղծում է իրեն հատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ:

Ազգի հիմնասյունը կրթությունն է, այն մարդակենտրոն գործընթաց է: Կրթության ողնաշարն ու առանցքը արժեհամակարգն է:

Բոլոր ժամանակներում էլ եղել են արժեքներ, որոնք մարդկության պատմության անբաժանելի մասն են կազմել: Դրանք, ժամանակի պահանջներից ելնելով, պարբերաբար ենթարկվել են որոշակի փոփոխությունների, բայց միևնույն է, կան արժեքներ, որոնք արդիական են բոլոր ժամանակներում. ժողովրդավարություն, արդարադատություն, հավասարություն,իրավունք, հայրենասիրություն, սեր և այլն:

Այսօրվա ԶԼՄ-ները , ցավոք, դաստիարակչական գործառույթը համարում են ոչ շահութաբեր՝ այն մղելով ետին պլան: Փաստորեն ետին պլան են մղվում ազգային, պետական, քաղաքակրթական արժեքները, ինչը դառնում է արժեհամակարգի ձևախեղման պատճառ: Երբեմն մեդիասպառողը դեռահաս է, ով չունի կայացած արժեհամակարգ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին: Դեռահասության տարիքում է ձևավորվում մարդու առաջնային արժեհամակարգը:Դեռահասը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է այսօր նրան ներարկել առողջ արժեքներ, ապագայի հասարակության համար պատրաստել հայրենասեր, քաղաքակիրթ քաղաքացիներ: Այս խնդիրների լուծումը հատկապես առաջնային է հայոց լեզվի և գրականության դասաժամերին :Ուսուցիչները գրեթե ամեն դասի ժամանակ առնչվում են սովորողների արժեհամակարգի ձևավորմանը:Որպեսզի ունենանք բարձր արժեքներով օժտված սերունդ պետք է կիրառենք մի շարք մեթոդներ և հնարներ:

2.Գրական ակնարկ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ բավականին լայն է: Այն մարդու հոգևոր, գեղագիտական, բարոյական, մշակութային, էթնիկական, իմացական արժեքների համախմբումն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Եթե նախապատվությունը տանք թվարկվածներից որևէ մեկին, դա կլինի ոչ մանկավարժական մոտեցում: Արժեհամակարգը ամբողջական է բոլոր համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժահամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը ձևավորում է հայրենասիրություն, ինքնաճանաչողություն: Իսկ ճանաչողության գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները սովորողների մոտ վեր են ածվում համոզմունքների և կարողությունների : Ժամանակակից մանկավարժության համար խնդիր է սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Սովորողների անձնային արժեքների ձևավորման վրա կարող են ազդել տարբեր գործոններ՝ կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, միջանձնային հարաբերությունները: Աշակերտը այս բոլորից կարող է վերցնել դրականը և բացասականը: Ուստի արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մասնագիտական խիստ վերահսկողություն և միջամտություն: Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք ,ուր հաստատում են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության տարածված արատների դեմ, որոնք վատ են անդրադառնում աշակերտի ինքնամտածողության վրա:

Կրթությունը իր մեջ ներառում է երեք հիմնական և կարևոր խնդիր.

1.Ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն)

2. Ինչի՞ համար սովորեցնել (կրթության նպատակներ)

3. Ի՞նչպես սովորեցնել (ուսուցան մեթոդներ)

Ուսուցման մեթոդը այնպիսի մի ուղի է, մի ձև , որը հնարավորություն է տալիս այդ ուղով ու ձևով հասնել նպատակին : Ուսուցման մեթոդը սովորողի և սովորեցնողի համագործակցությունն է ուսումնական միջավայրում, որն էլ իրականացնում է նպատակները: Այդ իսկ պատճառով դասավանդողը պետք է լինի փորձված՝ ուսումնական գործընթացն էլ ավելի հաջող ու հետաքրքիր կազմակերպելու համար: Համագործակցային ուսուցման ժամանակ խմբերը տարասեռ են: Խմբում կարևոր է աջակցող փոխկապակցվածությունը:

Այս ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են.

1. Դրական փոխկապակցվածություն
2. Դեմ առ դեմ խթանող փոխազդեցություն
3. Անհատական հաշվետվություն ու պատասխանատվություն
4. Սոցիալական հմտություններ
5. Խմբային գործընթաց

Համագործակցային ուսուցման ժամանակ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված է ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում և յուրացվում է հենց աշակերտների միջոցով:

Համագործակցային ուսուցման մեթոդներն են.

1.Աշակերտների թիմային առաջադիմություն

2. Խճանկար

3. Շրջագայություն պատկերասրահում

4. Երեք բանալի և մեկ կողպեք

5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք

6. Խմբային հետազոտություն

Ուսուցչի հիմնական աշխատանքը խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումն է: Ցանկացած դաս ու դասարան եզակի է:Նույն դասը նույն պլանով տարբեր դասարաններում լրիվ տարբեր է լինում: Համագործակցային մեթոդների առավելությունն այն է, որ աշակերտկենտրոն է, այսինքն ոչ թե ուսուցիչն է պատրաստի գիտելիք մատուցում, այլ աշակերտին մասնակից է դարձնում այդ գիտելիքի ձեռքբերանը: Այդ մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնություն, համագործակցային հետազոտական աշխատանքներ կատարելու բազում հմտություններ:

3.Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիրը

Հետազոտական աշխատանքը անց է կացվել Սյունիքի մարզի Լեռնաձորի հիմնական դպրոցի 7-րդ դասարանում: Այս դասարանում սովորում են 7 աշակերտ՝ 5 տղա և 2 աղջիկ : Դասարանում սովորողներն ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: Դասարանի 2 աշակերտների մոտ սկսեց նկատվել անտարբերություն դասի նկատմամբ: Ընդամենը երկու հետազոտական դասից հետո հասանք դրված նպատակներին և հասանք բավականին լավ վերջնարդյունքների: Հետազոտական աշխատանքը որոշեց իրականացնել գրականության ժամին, քանի որ անձի արժեհամակարգի ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի առարկաների դերը՝ հատկապես գրականության: Մինչ դասը սկսելը՝

1. ընտրել նյութը

2. հստակեցնել մոտեցումները

3. գնահատել նյութի կարևորությունը

4. պարզել խնդիրներն ու նպատակները

Մտածողության տեսակներն են .

1.Գտնել դասանյութի հիմնական իմաստը

2.Բերել դասին առնչվող օրինակներ

3.Համեմատել կամ հակադրել դասանյութում եղած մտքերը

Հետազոտական աշխատանքի համար ընտրելեմ արձակ և չափածո ստեղծագործություններ: Աշխատանքը կատարել եմ երկու դասաժամի ընթացքում՝ Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» և Դ. Դեմիրճյանի «Ավելորդը»:Այս դասերի միջոցով կարժևորեմ հայրենիքը, հայրենասիրությունը, մարդասիրությունը, անձի հանդեպ ունեցած խիղճը: Դասերի ընթացքում փորձարկվել է խմբային ,համագործակցային և էլ ուրիշ մեթոդներ, պարզելու համար , թե որքան արդյունավետ են այս մեթոդները նպատակին հասնելու համար:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԵՐ

3.1 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1. Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը : Խթանման փուլը սկսեցինք հինգրոպեանոց շարադրանքով(«Իմ Հայաստանը»), որից հետո կարդացինք երեխաների շարադրանքը Հայաստանի մասին, որոշները քննարկեցինք : Այնուհետև կիրառեցինք պրիզմայի մեթոդը: Աշակերտներին տրվեց առանձին քարտեր, որոնց մեջ նրանք պետք է նշեին երեք բառ , որոնք կբնութագրեին կամ կվերաբերվեին միայն Հայաստանին: Ավարտին պարզվեց ,որ մեծ մասը իրարից անկախ գրել էին Արարատ բառը: Խոսեցինք Արարատի , Քուչակի, Նարեկացու ,հայրենների մասին: Աշակերտները բաժանվեցին երկու խմբի , իրենց հանձնարարված մասը ընթերցեցին , վերլուծեցին , մեկնաբանեցին : Բանաստեղծությունից դուրս գրեցին պատկերավորման միջոցները: Խմբի

ներսում երեխաները աշխատում էին մեծ ոգևորվածությամբ , միմյանց օգնում էին սովորել սովորեցնելու մեթոդով: Կշռադատման փուլում քառաբաժան մեթոդով լրացրեցին հանձնարարված աղյուսակը: Դասի ավարտին լսեցին համանուն բանաստեղծության երգը : Կատարված աշխատանքի ընթացքում բոլորը ներգրավված էին դասապրոցեսին և մասնակցում էին մեծ խանդավառությամբ: Առանձրացրեցինք բոլոր այն արժեքները, որը մեզ է փոխանցում հեղինակը իր գոհար բանաստեղծության յուրաքանչյուր տողով ու տողատակով : Երեխաները պատասխանեցին այն հարցին թե ինչը կհիշեն այս դասից ,դասի թեմայից անգամ տասը տարի հետո:Պատասխանները ոգևորող ու հուսադրող էին:Այդ փոքրի կոլեկտիվում թևածում էր հայրենասիրության ոգին, ազգային արժեքներ ճանաչողության ու պահպանման միտումը:

Դասի ավարտին աշակերտները գրեցին թեստ, որի արդյունքները հետևյալն են.



3.2 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2. Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը

Ուսուցիչը ընթերցում է ստեղծագործության մի մասը՝ ուշադրություն դարձնելով Հաճի աղային նկարագրող տողերում կենդանի-թռչունների անվանումներին: Բացել նրանց հատուկ վարքագիծը և դիտարկել մեր կերպարի , նրա արժեհամակարգի բացահայտման համար.

Գտնել՝

*ուղտի վիզը առջև երկարած…

*աքլորի պես ոտքերը գետնից պոկելով…

*աղվեսի պես պոչը պրծացրել…

*ծուղակն ընկած մկան պես…

Հաճի աղան աստվածավախ	Հաճի աղան անաստված
միտքը բերեց,թե ինչպես իր 30 տարեկան կնոջը տարավ Երուսաղեմ	Դաժանացավ, անգթացավ, ստորացավ, վճռեց փրկել կարևորագույնը է իր անձը
Հաճի աղան վանքի պես տան տեր դառավ	Հաճին նայեց անդամալույծին, բայց չտեսավ նրան . որոնում էր ամենապետքականը
…եթե գար, միևնույն է, ճամփին կմեռներ	Անդամալույծը ավելորդ է
Ավելորդ մարդ չկա.Աստծու առջև հոգին հոգի է:	

Դասի ավարտին կատարված թեստի արդյունքներն են.



4.ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների արժեքային համակարգի ձևավորման կարողությունների բացահայտման համար կարևոր նշանակություն ունի ճիշտ ընտրված մեթոդը:Արդյունքներից պարզ դարձավ ,որ նյութրավելի մնայուն գիտելիքներ կտա աշակերտներին, եթե այն մատուցվի ճիշտ քայլերով: Պետք է ապահովվել բոլոր աշակերտների ներգրավվածությունը դասին՝ եթե որ լիարժեք, գոնե մասամբ: Խմբային ուսուցումը նպաստում է սոցիալական արժեքների ձևավորմանը: Հետաքրքիր էր լսել,թե երեխաները ինչպես էին վերլուծում կերպարները ՝մերկացնելով կերպրի ամբողջ հոգեբանությունը: Հետաքրքիր էին ցածր առաջադիմությամբ սովորող աշակերտներից մեկի տեսակետները, որոնցում բավականին խորը վերլուծություններ ու մեկնաբանություն կային: Բացահայտեցինք, որ մեր դպրոց վերջերս տեղափոխված աշակերտը բավականին գեղեցիկ ձայն ունի և նրա կտարմամբ ունկնդրեցինք «Ես իմ անուշ Հայաստանի» երգը :Երկրորդ փորձարարական դասի փախի տեսարանը երեխաները կապեցին մերօրյա պատերազմական իրադրությունների հետ ու այդ կապը շատ ավելի շոշափելի դարձրեց Արցախից տեղահանված աշակերտուհին : Հենց նրան էլ հանձնարարվեց Հաճի աղայի մարմնավորմամբ ներկայանալ դասընկերներին և արդարացնել իր որոշումները: Դասընկերները անկոտրուն մեղադրում էին՝ պնդելով, որ նրա կատարած քայլը բարոյական և ոչ մի արդարացում չունի: Վերոհիշյալ ստեղծագործությունների ունկնդրումը, ընթերցումը և դրանց դասերի ժամանակ տարված աշխատանքը նպաստել է սովորողների արժեքային համակարգի զարգացմանը և ձևավորմանը:

5.Գրականության ցանկ

1.Հանրակրթության պետական չափորոշիչ: Հավելված № 2 ՀՀ Կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի №439-Ն որոշման

2. Անահիտ Մենեմշյան, Զարուհի Սարգսյան, Վարդուհի Ստեփանյան «Հայ դեռահասի արժեհամակարգի փոխակերպումները էլեկտրոնային լրատվամիջոցների ազդեցությամբ» ԵՊՀ 2013թ.

3.https://hy.wikipedia.org/wiki/ Դիրքորոշում

4.Զեյնալյան Ն. Ա. ,Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում,Երևան,2017

5. Գրականության դասագիրք,7-րդ դասարան,Դավիթ Գասպարյան,2017,Երևան

6.Հավելված

6.1Դասի պլան-1

Ուսուցիչ՝Ա. Սիմոնյան

Առարկա	**Ամսաթիվ**	**Կիսամյակ**	**Դասարան**
Գրականություն			
	28.10.2022	1-ին	7-րդ
Սովորողների թիվը՝	**7**		
Թեմա՝	***Ե. Չարենց «Ես իմ անուշ Հայաստանի»***		
Օգտագործվող նյութեր՝	*Դասագիրք,լուսանկարներ,տեսասահիկ*		

Ամբողջական պատկեր՝	*Կիրառվում է ԽԻԿ համակարգը, 5-րոպեանոց շարադրանքը, պրիզմայի մեթոդը: Կշռադատման փուլում կկիրառվի քառաբաժան մեթոդը: Դասին կընդգրկվեն բոլորը: Դասի ավարտին կունկնդրեն «*Ես իմ անուշ Հայաստանի *» երգը :* *Կներկայացվի «Տաղարան » շարքը :*
Դասի նպատակը՝	*Արտահայտիչ կարդալ բանաստեղծությունը* *Գաղափար տալ տաղի և «Տաղարան շարքի մասին»* *Կարևորել բանաստեղծության հայրենասիրական կողմը* *Զարգացնել արժևորելու,ճանաչելու,գնահատելու կարողությունները*
Վերջնարդյունքները	*Թեմայի նպատակին հասնելու համար աշակերտը պետք է* **կարողանա՝** • Արտահայտիչ կարդալ և անգիր արտասանել բանաստեղծությունը • Դուրս հանել մակդիրները • Ներկայացնել շարքը և շարքում զետեղված բանաստեղծությունները • Տարբերակել հայրենասիրական բանաստեղծությունները • Ճանաչել,գնահատել,արժևորել հայրենասիրական արժեքները
Միջառարկայի և կապերը	Գրականություն-կերպարվեստ-երաժշտություն-պատմություն-աշխարհագրություն-բնագիտություն-հոգեբանություն

6.1Դասի պլան-2

Ուսուցիչ՝ Ա. Սիմոնյան

Առարկա	Ամսաթիվ	Կիսամյակ	Դասարան
Գրականություն			
	13.11.2022	1-ին	7-րդ
Սովորողների թիվը՝	7		
Թեմա՝	*Դ. Դեմիրճյան «Ավելորդը»*		
Օգտագործվող նյութեր՝	*Դասագիրք,լուսանկարներ,տեսասահիկ, ՏՀՏ գործիքներ,քարտեզ*		
Ամբողջական պատկեր՝	*Հարցերի միջոցով վեր կհիշեն հեղինակի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը և կուսումնասիրեն պատմվածքը:*		
Դասի նպատակը՝	• *Զարգացնել արժևորելու,ճանաչելու,գնահատելու կարողությունները* • *Ծանոթանալ հեղինակի ստեղծագործությանը*		

Վերջնարդյունքները	*Թեմայի նպատակին հասնելու համար աշակերտը պետք է* **կարողանա՝** • Արտահայտիչ կարդալ և բնութագրել կերպարներին • Վերլուծել նրանց արարքները • Գտնել պատկերավորման միջոցները • Ճանաչել,գնահատել,արժևորել բարոյական արժեքները
Միջառարկայի	Գրականություն -պատմություն-աշխարհագրություն-հասարակագիտություն-հոգեբանություն